# ՏԵՂԵԿԱՆՔ

ԱԺԲԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018-2020 ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒԼԻՍ, ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտներ)













* ՀՀ պետական բյուջե հաշվեգրված հարկային եկամուտներ և պետական տուրքեր

** Ներառված են նաև եկամտահարկից և պարտադիր սոցիալական ապահովության վճարներից եկամուտները,

*** Այլ հարկային եկամուտներում ներառված են՝ ճանապարհային հարկը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքները և տույժերը, միասնական մաքսային վճարը, դրոշմանիշային վճարները և այլ եկամուտներ (այդ թվում նաև՝ ՀՀ ՊԵԿ արտաբյուջետային փոնդին մուտքագրված գումարները)

2020 թ. հունվար-հուլիս ամիսներին պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 789.7 մլրդ դրամ, որը կազմում է 2020թ. ինն ամսվա համար հաստատված ցուցանիշի 68.1 %-ը: Հատկանշական է, որ 2020 թ. փաստացի ցուցանիշը 2019թ. համապատասխան ցուցանիշից պակաս է 5.1 %-ով կամ 42.2 մլրդ դրամով, իսկ 2018թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 17.0 %-ով կամ 114.5 մլրդ դրամով:

2020 թ. հունվար-հուլիս ամիսներին՝

- ավելացված արժեքի հարկի գծով մուտքերը կազմել են 253.9 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 6.6 %-ով, սակայն 2018 թ. ցուցանիշը գերազանցում է 11.6 %-ով,
- շահութահարկի գծով մուտքերը կազմել են 102.5 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշից պակաս է 15.4 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշից պակաս է 3.7 %-ով,
- եկամտային հարկի գծով մուտքերը կազմել են 241.8 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 2.9 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշը գերազանցում է 22 %-ով,
- ակցիզային հարկի գծով մուտքերը կազմել են 62.5 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 1.2 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշը գերազանցում է 8.6 %-ով,
- մաքսատուրքերի գծով մուտքերը կազմել են 35.3 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 28.3 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին զիջում է 23.4 %-ով,
- բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով մուտքերը կազմել են 30.6 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 11.3 %-ով, սակայն 2018 թ. մակարդակից պակաս է 11.0 %-ով,
- շրջանառության հարկի գծով մուտքերը կազմել են 19.0 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 3.5 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշը գերազանցում է 40.2 %-ով,
- սոցիալական վճարների գծով մուտքերը կազմել են 10.8 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 15.3 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշը գերազանցում է 17.6 %-ով,
- այլ հարկային եկամուտներից մուտքերը կազմել են 10.8 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 2.3 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշը գերազանցում է 7.4 %-ով,
- պետական տուրքերի գծով մուտքերը կազմել են 15 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշից պակաս է 12.8 %-ով, սակայն 2018 թ. ցուցանիշից ավել է 5.6 %-ով:

Հարկերի անցումային գերվճարները 2020թ. առաջին կիսամյակում կազմել են -193.6 մլն դրամ՝ 2019թ. -280.3 մլն դրամի և 2018թ. -55 մլրդ դրամի դիմաց:

Տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ՀՀ ՊԵԿ կայքում հրապարակված տեղեկատվությունը 2018-2020թթ. ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ